

Լարված վաղ վարվեցողական միջամտություն - աջակցական նամակ

Bernard Rimland, Ph.D.
Autism Research Institute
4182 Adams Avenue
San Diego, CA 92116

«Մենք ծնողներն ենք մի երեք տարեկան ինքնամփոփ (օտիստիկ) երեխայի: Կարդալուց հետո Ձեր Չայնր Լսելի Դարձրեք Ինձ-ը (Let Me Hear Your Voice) և խոսելուց հետո ուրիշ ծնողների հետ, ովքեր փորձել են վաղ վարվեցողական միջամտությունը, մենք խիստ շահագրգռված ենք մեր երեխան գրանցելու լարված վաղ վարվեցողական միջամտության ծրագրում: Դպրոցական պատասխանատուները թերահավատ են և անտարբեր: Արդյոք կցանկանայի՞ք մեզ համար գրել աջակցական նամակ, որպեսզի մեզ օգնի, որ այդպիսի դարմանում ձեռք բերենք մեր երեխայի համար»:

Առանձին առանձին պատասխանելուց հետո առաջին երկվեցյակ նման խնդրանքներին, ես գրեցի մի ընդհանրական «Առ որ անկ է» աջակից նամակ, որը ուղարկվել է ԱՄՆ-ում, Կանադայում և մինչև անգամ Ավստրալիայում բնակվող ընտանիքների, որոնք հեռախոսով, ֆաքսով կամ նամակով օգնություն էին խնդրել: Քանի որ կան շատ ավելի ուրիշ ընտանիքներ, որոնք թերևս օգտվեն, ահա այստեղ իմ տպագիր նամակը՝

Առ Որ Անկ է,

Որպես օտիզմի հետազոտության մարզում 30 տարուց ավելի փորձառություն ունեցող հոգեբան, նաև որպես խմբագիրը Autism Research Review International-ի, ես ուզում եմ լրջորեն ընդգծել լարված վաղ վարվեցողական միջամտության արժեքը որպես մի եղանակի,- ի դեպ, ամենից կարևոր առկա եղանակը,- օտիստիկ երեխաների մեծ մասի վիճակի լավացման տեսակետից: Լարված վաղ վարվեցողական միջամտության արժեքի կապակցությամբ իմ գորակցությունը հիմնվում է երկու ապացույցների վրա՝

Հետազոտություն՝ Ոչ մի կասկած՝ որ հետազոտական ապացույցը ուժգնորեն նախընտրում է օտիզմի դեպքում լարված վաղ վարվեցողական միջամտության արժեքը: Առաջին ուսումնասիրությունը, հրատարակված 1985 թվին Princeton Child Development Institute-ից Fenske-ի և համահեղինակների կողմից, Annals of Intervention in Developmental Disabilities-ում (5-րդ Տարի, էջ 849-56), տեղեկագրում է, որ 5 տարեկանից առաջ ծրագրում գրանցված օտիստիկ երեխաների 60 տոկոսը բավականին բարելավվել է՝ սովորական երեխաներին միանալու չափ (ոչ միայն «ընդգրկվել»):

PCDI-ի ուսումնասիրությունը արժանացավ փոքր ուշադրության: Օտիզմում լարված վաղ վարվեցողական միջամտության ներկա բարձր մակարդակի հետաքրքրությունը խթանվեց շնորհիվ հրապարակմանը ղեկավարված այն փորձի, որտեղ լարված միջամտական ծրագրում ընդգրկված 19 երեխաներ բաղդատվել էին, մեկից ավելի չափումներով, 40 երեխաների ղեկավարված խմբի հետ, որոնք մասնակցել էին նվազ

լարված ծրագրի: «Լարված» խմբից իննը կարող էին միանալ սովորական երեխաներին, ղեկավարված խմբից մեկի դիմաց: UCLA-ում Ivar Lovaas-ի և իր գործակիցների կողմից անցկացված այս ուսումնասիրության մեծապես դրական արդյունքները այնքան անսպասելի էին, որ Journal of Consulting and Clinical Psychology-ի խմբագիրները տեղեկանքը հրատարակելուց առաջ այն ենթարկեցին երեք հարգելի գործակից խմբագիրների վերստուգմանը (65-րդ Տարի, Համար 1, 1987, էջ 3-9): Այնուհետև, նրան հետևող մի հոդված հրապարակվեց American Journal on Mental Retardation-ում (4-րդ Տարի, 1993), որտեղ McEachin-ը, Smith-ը և Lovaas-ը տեղեկագրեցին, որ «լարված» խմբի զերազանց կրթական զարգացումը և բնականոն հասարակական նվաճումը, բոլոր չափումներով, շարունակվում էր նրանց պատանեկան տարիներին:

Մի շարք մեծապես հարգելի մասնագետներ հրավիրվել էին, որ տեսակետ հայտնեն այս նորագույն տեղեկանքի մասին, և նրանց տեսակետները, համարյա միաձայնությամբ խիստ նպաստավոր, հրատարակվել էին նույն համարում:

Նման մեծապես դրական արդյունքներ, հիմնված լարված վաղ վարվեցողական միջամտության ծրագրի վրա, հրապարակվեցին RutgersUniversity-ից Harris-ի և համահեղինակների կողմից Journal of Autism and Developmental Disabilities-ում (21-րդ Տարի, Համար 3, 1991, էջ 261-290): Մինչ PCDI-ի և UCLA-ի ուսումնասիրություններն օգտագործել էին ցածր-գործունեությամբ օտիստիկ երեխաներ, Rutgers-ի ուսումնասիրության երեխաները թեթևակի կամ չափավոր խանգարում ունեցողներ էին:

Կլինիկական Ապացույց՝ Lovaas-ի ուսումնասիրությունը հրատարակվելուց հետո, բազմաթիվ ծնողներ Միացյալ Նահանգների ողջ տարածքից դիմել են ինձ, իրենց սեփական երեխաներին ենթարկելով լարված վաղ վարվեցողական միջամտության, երբեմն տնային ծրագրի հիմամբ, երբեմն էլ իրենց դպրոցական համակարգի միջոցով: Ես մեծապես տպավորվել եմ հետևողականորեն հզոր նեցուկովը այս ընտանիքների՝ լարված վաղ վարվեցողական միջամտության նկատմամբ: Վերջերս մայրերից մեկը ինձ զանգահարեց, իմացնելու համար, որ իր զավակը երեք շաբաթում գտնվելով «Lovaas» խիստ լարված ծրագրում, ցույց է տվել շատ ավելի բարելավում, քան ձեռք էր բերել իր սովորական դպրոցական ծրագրում անցած երեք տարիներում և որը հատուկ մշակվել էր օտիստիկ երեխաներին օգնելու նպատակով: Այսպիսի խանդավառությունը արտասովոր չէ:

Թյուրիմացություններ՝ Ես երբ նոր սկսեցի գրել և դասախոսել վարվեցողական բարեփոխումների մասին 1965 թվին, կային երկու տարածված թյուրիմացություններ: Դժբախտաբար, նույն երկու թյուրիմացությունները տարածված են նաև այսօր:

Վարվեցողական միջամտության որոշ քննադատներ ասում են, որ միջամտությունը առաջացնում է անձկուն, ռոբոտանման վարվեցողությամբ երեխաներ, ինչպիսիք են մարզված բոկերը: Սա բացարձակ անհեթեթություն է: Իր հրաշալի գրքում՝ Let Me Hear Your Voice, հեղինակ Catherine Maurice-ը խոսում է իր երկու խիստ օտիստիկ երեխաների մասին, երկուսն էլ որպես օտիստիկ ախտաճանաչված Նյու Յորք քաղաքի զանազան բացառիկ նյարդագետների և հոգեբույժների կողմից, և երկուսն էլ առողջացած այն աստիճան, որ այլևս ոչ մի պատճառ չկա նրանց սովորականից

տարբեր համարելու համար, առավելաբար որպես հետևանք տանը կիրառված լարված վաղ վարվեցողական միջամտության ծրագրի: Ես վերջերս խոսել եմ Դոկտ. Ira Cohen-ի և բժիշկ Richard Perry-ի հետ, ովքեր ծանոթ են Catherine Maurice-ի գրքում բնութագրված երեխաների հետ: Նրանց տեղեկագրածով, իրենք այս երեխաների մոտ չեն նկատել օտիզմի նշաններ և, ի դեպ, այդ մասին գրել են մի հոդված, որը նախատեսվում է, որ մոտերս կիրատարակվի Journal of the American Academy of Child and Adolescent Psychiatry-ում:

Երկրորդ թյուրիմացությունն այն է, որ վարվեցողական միջամտությունը առհասարակ ենթադրում է ճնշիչ միջամտական խթանիչների օգտագործումը: Ճշմարիտ չէ: Վարվեցողական միջամտությունն օգտագործում է ահագին դրական նեցուկ և մինչև անգամ թեթևակի ճնշիչ միջամտական խթանիչները, ինչպես բարձրաձայն «ոչը», հազվադեպ են հարկավոր, եթե երբևէ հարկավոր են: (Ճնշիչ միջամտական խթանիչները օգտագործվում էին հաճախ սկզբնական շրջանում:)

Օտիզմից Բուժվելը՝ Ինչու՞ այսքա՛ն թերահավատ մոտեցում վաղ վարվեցողական միջամտության նկատմամբ: Անկասկած, ոմանք թերահավատ են, հասկանալիորեն, քանի որ օտիզմը ճանաչված է որպես կենսաբանական խանգարում, և թվում է, որ հավանական չէ, որ վարվեցողական բուժումը այնքան էլ արդյունավետ լինի: Մի թերագնահատեք մարմնի՝ համարյա անհավատալի նվաճումներ արձանագրելու կարողությունը,- նկատի առած խիստ կենտրոնացված, սուր, երկարաժամկետ մարզումը: Հաշվի առեք ողիմպիական մարմնամարզիկի հոյակապ ունակությունները և պահանջված մարզումի լարվածությունը: Մարմնամարզիկի զարմանահրաշ հաջողությունները հնարավոր են դառնում միայն լարված մարզումի շնորհիվ: Ապացույցը ցույց է տալիս, որ առնվազն որոշ օտիստիկ երեխաներ կարող են սովորել, թե ինչպես պետք է հաղթահարել իրենց անկարողությունը՝ եթե սկսեն վաղ հասակում և փորձը լինի իսկապես լարված, մեկ երեխայի մեկ մարզիչ համեմատությամբ, շաբաթը 30-ից ավելի ժամ:

Բայց ի՞նչ բանում պետք է մարզվեն նրանք՝ հաղթահարելու համար օտիզմը: Ես այս հարցը քննարկել եմ իմ 1965 թվի թեզում՝ Operant Conditioning: Breakthrough in the Treatment of Mentally Ill Children: Ոչ ոք չգիտի, թե ինչու օպերանտ կոնդիշնինգ-ը (որը ներկայումս կոչվում է վարվեցողական բարեփոխում) արդյունավետ է, ոչ էլ, թե ինչու՞ վարվեցողական փոփոխությունները ընդհանրացվում են և կիրառելի են այնքա՛ն նոր վարվեցողությունների նկատմամբ: Իմ սեփական տեսությունն այն է, որ օպերանտ մարզումը, հատուկ վարվեցողություններ սովորեցնելու կողքին, երեխային նաև սովորեցնում է ինչպես ուղղել և կենտրոնացնել իր ուշադրությունը: Կենտրոնանալը,- սովորել ինչպես կենտրոնացնել մեր ուշադրությունը և որոշել ի՞նչ բանի ուշադրություն դարձնել,- գալիս է այնքա՛ն բնական, որ մենք այն ընդունում ենք որպես տվյալ: Բայց դուք չեք կարող սովորել՝ մինչև ուշադրություն չդարձնեք... Իմ համոզումով, (օտիստիկ) երեխաները պետք է սովորեն ինչպես կենտրոնանալ, ուղղել իրենց ուշադրությունը: Առանց հատուկ անմիջական մղումի,- ո՛չ երկարաժամկետ մղում, ինչպիսին է համալսարանական աստիճանը,- առանց հատուկ մշակված ծրագրի, որը նրանց թույլատրի առաջանալ փոքր քայլերով, շատեր երբեք չեն սովորի: Օպերանտ մարզումի միջոցով օտիստիկ երեխան ոչ միայն կսովորի, այլև կսովորի ինչպես սովորել:

Երբ 30 տարի առաջ գրեցի այս տողերը, ես չգիտեի, թե ինչքան լավ նույնիսկ սուր օտիստիկ խանգարումով երեխաները կարող են սովորել իրենց ուշադրությունը արդյունավորապես գործի դնել՝ եթե պայմանները, - լարված վարվեցողական բարեփոխումը, - պահանջեն, որ նրանք սովորեն ուշադիր լինել: Այդ նույն թեգում (որը հիմնված էր այն բանախոսության վրա, որը տվել էի 1965 թվին Autism Society of America-ի հիմնադրության առիթով), ես նաև ասել էի. «Երեխաները այսպիսի հաստատուն, կառուցավոր դասարանային կացությունում ուրիշ երեխաների, - իրենց նման, թերզարգացած կամ բնականոն, - հետ դնելու արժեքը կարելի չէ գերզնահատել: Հենց որ երեխայի վարվեցողությունը և ուշադրությունը ղեկավարվի, ընտանիքը և ուսուցիչները կարող են ստանձնել լրացուցիչ մարզումը և հասարակայնացումը... Եթե երեխայի ուսուցիչը կամ ընտանիքը շահագրգռված են, որ իրենց երեխան հարմարվի և բարելավվի, և եթե նրանք կիրառեն վերևը նկարագրված սկզբունքները, նրա զարգացումը շատ հաճախ կլինի նշանակալի»: